Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացմանը տեղական մակարդակում

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական մասնակցությունը տեղական մակարդակում

Քաղաքացիական մասնակցությունը հանրային իշխանությունների կողմից անհատների, ՀԿ-ների և ընդհանուր քաղաքացիական հասարակության ներգրավումն է որոշումների կայացման գործընթացներում[1]: Ընդ որում, քաղաքացիական մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը պետք է ձգտի ներկայացնել, հավաքել և փոխանցել անհատների տեսակետները՝ ուղղակի կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) միջոցով, ապահովելով փաստացի և ապացուցողական տեղեկատվության և տեսանկյունների փոխանակում, որը տեղեկացված է դարձնում որոշումների կայացման գործընթացը և ապահովում հանրային իրական կարիքների բավարարում[2]:

Որպես հանրային իշխանության բաղկացուցիչ մաս՝ տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) ևս անմասն չպետք է մնան նշված մոտեցումներից:

Հայաստանի Հանրապետությունում տեղական մակարդակում քաղաքացիական մասնակցությունը երաշխավորվում է ինչպես Սահմանադրությամբ[3], այնպես էլ օրենքով: Մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրվում է, որ տեղական ինքնակառավարմանը (ՏԻ) համայնքի բնակիչների մասնակցությունը հանդիսանում է ՏԻ սկզբունք[4], իսկ համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա[5]: Ընդ որում՝ բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով[6]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, գործող օրենսդրությունը որևէ կերպ չի խոչընդոտում, ընդհակառակը, անհրաժեշտ և բավարար հիմքեր է ապահովում տեղական մակարդակում քաղաքացիական մասնակցությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրացնելու համար:

---

[1] Եվրոպայի խորհուրդ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԻԾ, վերանայված և հաստատված CDDG-ի կողմից 2017թ մայիսի 11-ին՝ Նախարարների կոմիտեի հաստատմանը ներկայացնելու նպատակով, էջ.25

[2] Նույնը:

[3] ՀՀ Սահմանադրություն, Հոդված 183, մաս 2:

[4] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 8, մաս 1, կետ 14, ՀՕ-337, 07.05.2002, (16.01.2018 փոփոխություններով), հասանելի է՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=121578

[5] Նույնը, Հոդված 11, մաս 1:

[6] Նույնը, Հոդված 11, մաս 4:

Սակայն, գաղտնիք չէ, որ տեղական իշխանությունները որոշակի դժվարությունների են հանդիպում քաղաքացիական մասնակցություն ապահովելու գործընթացներում, և խոսքը ամենևին իրավական կարգավորումների մասին չէ:

Երբեմն ՏԻՄ-երը չեն կողմնորոշվում, թե որևէ կոնկրետ հիմնախնդրի դեպքում ում և ինչպես մասնակից դարձնել հարցի քննարկման և որոշման կայացման գործընթացում, որպեսզի մասնակցության հնարավորինս լայն շրջանակ ուրվագծվի, սակայն միևնույն ժամանակ ապահովվի կառուցողական քննարկումների անցկացումը:

Ակնհայտ է, որ արդարացված չէ համայնքի բոլոր բնակիչներին մասնակից դարձնել համայնքային յուրաքանչյուր հիմնախնդրի քննարկմանը: Ասվածը ավելի է հիմնավորվում այն առումով, երբ բնակիչները իրենք շատ դեպքերում հետաքրքրություն չեն դրսևորում այն հարցերում, որոնք իրենց առօրյա գործունեության հետ չեն առնչվում կամ առնչվում են մասնակիորեն:

Մյուս կողմից, տեղական իշխանությունները որոշ հարցերում իրապես կարիք են զգում համայնքի բնակիչների հետ խորհրդակցելու և նրանց առաջարկները լսելու, քանի որ ընդունված որոշումները անմիջականորեն ազդելու են հենց վերջիններիս վրա: Ուստի լավագույն լուծման որոնումը և հետագայում հնարավոր դժգոհություններից խուսափելը առաջնային է դառնում ՏԻՄ-երի համար:

Առաջացած այս հակասությունը լուծելու թերևս լավագույն լուծումը կարող է հանդիսանալ ներկայացուցչական մասնակցության ապահովումը, երբ որոշումների կայացման գործընթացում ներգրավվում են քաղաքացիական մասնակցության այնպիսի սուբյեկտներ, որոնք ներկայացնում են հնարավորինս լայն շրջանակի շահակիրների:

Ահա այս նպատակով Եվրոպայի Խորհուրդը 2008թ-ին հրապարակեց C.L.E.A.R. գործիքակազմը[7] (այսուհետ՝ գործիքակազմ), որն ուղղված էր օգնելու հանրային, այդ թվում և՝ տեղական իշխանություններին բացահայտել բնակիչների մասնակցության հարցում իրենց համայնքների հակվածությունը և կարողությունը, ինչպես նաև գնահատել այդ գործընթացին աջակցելու համար առկա սեփական ռեսուրսները:

Ի հավելումն վերոգրյալի՝ Եվրոպայի Խորհուրդը 2016թ-ին մշակեց լրացուցիչ չափորոշիչներ, որոնք անհրաժեշտ էին տեղական մակարդակում պատշաճ կառավարմանը քաղաքացիական մասնակցությունը սահմանելու համար: Արդյունքում մշակվեց Քաղաքացիական մասնակցության ուղեցույցը (2016թ)[8], որը սահմանում էր ՏԻ-անը բնակչության մասնակցության հիմնական սկզբունքները:

Գործիքակազմի ներդրումը ՀՀ-ում

Եվրոպայի Խորհրդի <<Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը>> ծրագրի շրջանակներում խնդիր էր դրված նպաստել ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների արդյունքում նոր ձևավորված 52 բազմաբնակավայր համայնքներում (թիրախային համայնքներ) Գործիքակազմի կիրառմանը, աջակցել համայնքային իշխանություններին խորությամբ հասկանալ

[7] Եվրոպայի Խորհուրդ, CDLR. (2008). C.L.E.A.R. գործիք՝ վերջնական տարբերակ [CDLR(2008)42], Եվ. Ստրասբուրգ, էջ 7:

[8] Եվրոպայի Խորհուրդ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԻԾ, վերանայված և հաստատված CDDG-ի կողմից 2017թ մայիսի 11-ին՝ Նախարարների կոմիտեի հաստատմանը ներկայացնելու նպատակով:

Գործիքակազմի անկյունաքարային դրույթները, մոտեցումները, ինչը թույլ կտար նորովի բացահայտել համայնքում քաղաքացիական մասնակցության ներուժը, գնահատել պոտենցիալ շահակիրների ցանկը, նրանց կարողությունները և պատրաստակամությունը համագործակցելու և այլն:

ԵԽ գործիքակազմի կիրառումը համայնքներին հնարավորություն է ընձեռում առավել կառուցողական մոտեցում ցուցաբերել որոշումների կայացման գործընթացում բնակիչների մասնակցությունը ապահովելիս, միևնույն ժամանակ, կատարելով շահակիրների գնահատում կոնկրետ խնդրի շուրջ, ՏԻՄ-երը կարող են արժեքավոր առաջարկություններ ստանալ մասնակիցների առավել կոմպետենտ շրջանակներից:

Վերոնշյալը իրականացնելու նպատակով 2018թ-ի մարտի 20-23-ին նոր ձևավորված 52 համայնքները բաժանվեցին 2 խմբի և յուրաքանչյուր խմբի համար կազմակերպվեցին երկօրյա սեմինարներ միջազգային և տեղական փորձագետների մասնակցությամբ: Սեմինարների ընթացքում համայնքների ներկայացուցիչներին հանգամանորեն ներկայացվեց Գործիքակազմի էությունը, նրա տրամաբանությունը և կիրառման ձևը: Պայմանականորեն ձևավորված փոքր խմբերի շրջանակներում կատարվեց Գործիքակազմի փորձնական կիրառում՝ սեփական նախաձեռնությամբ ընտրված հիմնախնդրի շուրջ շահակիրների և համայնքի գնահատում իրականացնելով:

Դասընթացի ավարտից հետո մասնակիցներին տրամադրվեց Գործիքակազմի բաղկացուցիչ մաս կազմող գնահատման ինտերակտիվ ֆայլը: Համայնքները իրենց հերթին պարտավորվեցին խելամիտ ժամանակահատվածում կատարել գնահատում իրենց համայնքներում՝ ծրագրի փորձագիտական թիմի աջակցությամբ:

Սեմինարների անցկացման ընթացքում արդեն իսկ ակնհայտ էր, որ համայնքների զգալի մասը կհանդիպի որոշակի դժվարությունների ինքնուրույն գնահատումը իրականացնելիս: Պատճառը հիմնականում Գործիքակազմի ընդհանուր փիլիսոփայության նորությունն էր, նրանում արտացոլված մոտեցումները և կիրառումը:

Խոսքը ամենևին նրա մասին չէ, թե ՏԻՄ-երը չեն պատկերացնում՝ ինչ է բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը և ինչպես պետք է այն իրացնել: Ընդհակառակը, սակայն այդ մասնակցությունը ապահովելու «ավանդական» մոտեցումները և ձևերը որոշ առումով համահունչ չեն Գործիքակազմի տրամաբանության հետ: Օրինակ՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀԶԾ) կամ տարեկան բյուջեի հանրային քննարկումների ժամանակ մասնակիցների թիվը առաջին հայացքից կարող է մեծ թվալ: Սակայն, եթե դիտարկենք նրանց ներկայացուցչականությունը և ներկայացվածությունը, ապա պարզ կդառնա, որ մասնակիցները հիմնականում համայնքային ծառայողներ են, ՀՈԱԿ-ների ներկայացուցիչներ կամ համայնքի աշխատակազմի գործունեության հետ կապ ունեցող այլ անձինք: Ակնհայտ է, որ նման ձևաչափով կազմակերպված հանրային քննարկումների արդյունավետությունը էապես ցածր է, իսկ քննարկումը շատ դեպքերում նմանվում է համայնքի աշխատակազմի աշխատանքային խորհրդակցության:

Նման պատկերը, միանշանակորեն, տեղական իշխանությունների կողմից դիտավորության դրսևորում չէ: Վերջիններս իրապես դժվարանում են իրենց համայնքում քաղաքացիական մասնակցության գործընթացների պոտենցիալ շահառուներին նույնականացնելու հարցում: Ասվածը բազմիցս հիմնավորվել է

վերոնշյալ սեմինարների ընթացքում անցկացված գործնական աշխատանքների ժամանակ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդիր դրվեց սեմինարի ավարտից հետո այցելել թիրախային համայնքներ և տեղում աջակցել տեղական իշխանություններին Գործիքակազմով նախատեսված գնահատումը իրականացնելու համար: Վերջինս հաջողությամբ իրականացվել է Ծրագրի փորձագիտական թիմի կողմից:

Զեկույցի բովանդակությունը, հիմնական դրույթները

Սույն զեկույցում ներկայացվում է համայնքներում քաղաքացիական մասնակցության կարողության գնահատման վերլուծությունը՝ հետևյալ ուղղություններով՝

1. համայնքներում բնակիչների մասնակցության ներուժի և դիրքորոշման գնահատում,
2. շահակիրների քարտեզագրում, նրանց մասնակցության ներուժի գնահատում՝ ըստ որոշակի խնդրի:

Վերլուծությունը իրականացվել է ինչպես թիրախային համայնքների կողմից իրականացված ինքնուրույն գնահատման տվյալների հիման վրա, այնպես էլ Ծրագրի փորձագիտական թիմի՝ դեպի համայնքներ այցելությունների ընթացքում կատարված գնահատումների հիման վրա:

Ծրագրի թիրախային համայնքները, ըստ մարզերի, ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ծրագրի թիրախային համայնքները՝ ըստ մարզերի

	Մարզ	***Համայնք***			***Մարզ***	***Համայնք***
1.	Արագածոտն	Ապարան		27.	Շիրակ	Անի
2.		Ալագյազ		28.		Ախուրյան
3.		Արագածավան		29.		Ամասիա
4.		Ծաղկահովիտ		30.		Աշոցք
5.	Արարատ	Ուրցաձոր		31.		Արփի
6.	Գեղարքունիք	Ճամբարակ		32.		Մարմաշեն
7.		Վարդենիս[9]		33.		Սարապատ
8.		Գեղամասար		34.	Սյունիք	Կապան
9.		Շողակաթ		35.		Գորիս
10.	Լոռի	Ալավերդի		36.		Մեղրի
11.		Ախթալա		37.		Սիսիան
12.		Թումանյան		38.		Քաջարան
13.		Ստեփանավան		39.		Գորայք
14.		Տաշիր		40.		Տաթև
15.		Գյուլագարակ		41.		Տեղ
16.		Լոռի Բերդ		42.	Վայոց Ձոր	Ջերմուկ
17.		Մեծավան		43.		Վայք

[9] Թիրախային համայնքներից միայն **Վարդենիս** համայնքն է, որ չի մասնակցել Ծրագրի շրջանակներում կազմակերպված երկօրյա սեմինարին և չի իրականացրել գնահատում՝ համաձայն Գործիքակազմի:

18.		Շնող
19.		Սարչապետ
20.		Օձուն
21.	Կոտայք	Բյուրեղավան
22.		Եղվարդ
23.		Չարենցավան
24.		Ակունք
25.		Մեղրաձոր
26.		Ջրվեժ

44.		Արենի
45.		Գլաձոր
46.		Զառիթափ
47.		Եղեգիս
48.	Տավուշ	Այրում
49.		Բերդ
50.		Դիլիջան
51.		Նոյեմբերյան
52.		Կողբ

Ինչպես և սահմանված է Գործիքակազմի մեթոդաբանությամբ, համայնքների գնահատումը իրականացվում է՝ հիմնվելով 4 խումբ փոփոխականների վրա՝

1. սոցիալական կապիտալ,
2. տնտեսական կապիտալ,
3. մարդկային կապիտալ,
4. քաղաքական կապիտալ:

Ելնելով նշված խմբերում արտացոլված փոփոխականների գնահատումից՝ պատկերացում է կազմվում տվյալ համայնքի՝ բնակիչների մասնակցության ներուժի և դիրքորոշման վերաբերյալ:

Գործիքակազմով նախատեսված հաջորդ քայլը շահակիրների նույնականացումն է, դրանց շտեմարանի կազմումը և ըստ որևէ կոնկրետ հիմնախնդրի՝ գնահատումը:

Շահակիրների գնահատման համար անհրաժեշտ փոփոխականները նույնպես համախմբվում են 4 նույնանուն խմբերում, ինչ համայնքի գնահատման դեպքում, սակայն այստեղ մոտեցումը մի փոքր այլ է և փոփոխականները որոշակիորեն տարբերվում են : Այստեղ կարևորվում է գնահատել ոչ միայն տվյալ շահակիրի կարողությունը, այլև նրա պատրաստակամությունը ներգրավվելու որոշումների կայացման գործընթացում:

Սույն վերլուծությունը նպատակ ունի համեմատել թիրախային համայնքներում գնահատման արդյունքները, նկատված ընդհանուր միտումները վեր հանելու, , համապատասխան եզրակացություններ անելու և դրանց հիման վրա քաղաքացիների մասնակցության գործընթացներում հնարավոր բարելավումներ իրականացնելու ուղղությամբառաջարկություններ ներկայացնելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համաթվի ընդհանուր մեծությունը, բաշխվածությունը

Համայնքների գնահատման և արդյունքների ամփոփման վերլուծությունը թույլ տվեց հաշվել համաթվի ընդհանուր մեծությունը՝ 0,596: Այն իրենից ներկայացնում է բոլոր համայնքների համար միջինացված ցուցանիշ, որը հաշվարկվում է յուրաքանչյուր համայնքը բնութագրող սոցիալական, տնտեսական, մարդկային և քաղաքական կապիտալի ցուցանիշների միջին թվաբանականը: Քանի որ այն շատ ընդհանրական ցուցանիշ է նպատակահարմար է գնահատումն իրականացնել ըստ ոլորտների:

Ըստ գնահատման ոլորտների՝ արդյունքները հետևյալն են՝

Սոցիալական կապիտալ՝ 0,57
Տնտեսական կապիտալ՝ 0,49
Մարդկային կապիտալ՝ 0,66
Քաղաքական կապիտալ՝ 0,67

Հատկանշական է, որ գնահատման նման պատկերը որոշակիորեն կանխատեսելի էր Հայաստանյան իրականության համար: Համայնքներում որոշումների կայացմանը քաղաքացիական մասնակցության ցածր մակարդակը պայմանավորող հիմնական գործոնները մնում են մասնակցության գործընթացների մշակույթի համեմատաբար նոր ներդրված լինելը, ինչպես նաև սոցիալական ծանր պայմաններում համայնքային հասարակական կյանքի նկատմամբ անտարբերությունը:

Գծապատկեր 1. Համայնքի համատեքստը պայմանավորող ոլորտների գնահատականների ցրվածությունը



Ինչպես երևում է գծապատկերից, համայնքների զգալի մասում (22) միանման է գնահատվել տնտեսական կապիտալը, ինչի արդյունքում դրա ուրվագիծը բրգաձև է, իսկ գագաթի շեղումը դեպի ձախ հուշում է, որ ոլորտի միջին գնահատականը ցածր է մյուս ոլորտների միջիններից: Այն մեկ անգամ ևս գալիս է ապացուցելու տնտեսական գործոններով պայմանավորված քաղաքացիների պասիվ մասնակցությունը: Նման պատկեր է նաև սոցիալական կապիտալի ոլորտում: Չնայած, նրա միջին գնահատականը որոշակիորեն բարձ է տնտեսական կապիտալից, սակայն համայնքները գրեթե հավասար են գնահատել այն: Այս պարագայում կարելի է պնդել, որ այդ խնդիրները շատ դեպքերում համապետական բնույթ են կրում:

Ի տարբերություն նախորդ երկուսի, մարդկային կապիտալի և քաղաքական կապիտալի թմբաձև ուրվագծերը հուշում են, որ համայնքները որոշակիորեն տարբերվում են, ինչը կարող է պայմանավորված լինել համայնքների մեծությամբ,

բնակչության թվից, ինչպես նաև ընդգծված քաղաքային կամ գյուղական բնակավայրերին հատուկ կառավարում իրականացնելուց:

Խոշոր համայնքներում, որտեղ ակտիվ են ՔՀԿ-ները, կան խոշոր տնտեսավարողներ և այլ ոչ ֆորմալ հանրույթներ, տեղական իշխանությունները հայտնվում են որոշակիորեն շահեկան դիրքում: Վերջիններս հնարավորություն ունեն համագործակցել հանրային հատվածի կազմակերպությունների հետ ու ծավալել արդյունավետ և կառուցողական քննարկումներ և վարել ակտիվ երկխոսություն: Իրավիճակը այլ է համեմատաբար փոքր համայնքներում, ուր «բոլորը բոլորին» գիտեն, չկան հստակ ձևավորված մասնագիտական կամ ընդհանուր շահ հետապնդող խմբեր: Նմանատիպ համայնքները լուրջ խնդիր ունեն իրենց պոտենցիալ շահակիրներին բացահայտելու և նույնականացնելու հարցում:

Անդրադառնանք յուրաքանչյուր խումբ փոփոխականների գնահատականներին՝ առանձին-առանձին:

Սոցիալական կապիտալ (հիմնական դրական և բացասական գործոնները)

Համաձայն Գործիքակազմի մեթոդաբանության՝ սոցիալական կապիտալի ոլորտի գնահատումը ուղղված է համայնքի սոցիալական կենսունակությունը, ինչպես նաև սոցիալական կյանքին և միջոցառումներին մասնակցելու առանձին շահակիրների կարողությունը/պատրաստակամությունը բացահայտելուն:

Ծրագրին մասնակցող թիրախային համայնքներում սոցիալական կապիտալի ոլորտի ընդհանուր համաթիվը 0,57 է:[10]

Հավաքագրված տվյալների և իրականացված գնահատումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ համայնքների գերակշիռ մասը անմիջապես իրենց վրա են զգում վերջին տարիներին ՀՀ նկատվող արտագաղթի (հատկապես՝ աշխատանքային) բացասական հետևանքները: Ըստ գնահատումների՝ համայնքներում վերջին տարիներին բնակչության թվի ավելացում գրեթե չի նկատվել, իսկ արտագաղթի հետևանքով համայնքները լքել են երիտասարդ, բանիմաց բնակիչներ, որոնք կարող էին մեծապես ներգրավված լինել համայնքում որոշումների կայացման գործընթացներում:

Սակայն, համայնքները միակարծիք չեն աշխատանքային միգրացիայի դերակատարման հարցում: Որոշ համայնքներ կարծում են, որ աշխատանքային միգրացիան հնարավորություն է տալիս հաղորդակցվելու այլ համայնքների հետ և այնտեղից նոր գաղափարներ բերել համայնք: Սրան հակառակ՝ կան համայնքներ, որոնք բացասական են գնահատում աշխատանքային միգրացիան. պատճառը հայրենի համայնքից կտրվելն է և աշխատանքի գնալ-գալու հետևանքով համայնքի հասարակական կյանքին անհաղորդ և անմասն լինելը:

Հատկանշական է, որ այն համայնքներում, որտեղ կան ազգային փոքրամասնություններ, տվյալ համայնքի ՏԻՄ-երը էապես կարևորում են և դրական են գնահատում վերջիններիս մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին:

Համայնքների զգալի մասում 30-ից բարձր տարիքի բնակչությունը գերակշռում է՝ կապված դեպի մայրաքաղաք ուսման գնալու, ինչպես նաև սեզոնային արտագնա աշխատանքի մեկնելու հետ: Սակայն, անհրաժեշտ է փաստել, որ համայնքներից

[10] Տես՝ Հավելված 1.

շատերը սա բացասական երևույթ չեն գնահատում՝ բնակիչների մասնակցության համատեքստում: Վերջիններս նշել են, որ ճիշտ է, երիտասարդների քանակի փոքր թիվը իր ազդեցությունը թողնում է համայնքի հասարակական կյանքի աշխուժության վրա, այնուամենայնիվ 30-ն անց բնակչությունն էլ իր կարևոր դերակատարումն ունի համայնքում որոշումների կայացման գործընթացներում:

Ըստ համայնքային իշխանությունների ներկայացուցիչների՝ բոլոր համայնքներում համացանցի հասանելիությունը ապահովված է: Բնակիչները համացանցին միանալու խնդիրներ փաստացի չունեն: Այլ հարց է բնակիչների մոտ համապատասխան հմտությունների առկայությունը: Այնուամենայնիվ, ըստ ՏԻՄ-երի հավաստման, վերջին տարիներին էապես ավելացել է համացանցից օգտվելու բավարար հմտություններ ունեցող բնակիչների թիվը, ինչը իր հետ բերում է նաև ՏԻՄ-բնակիչ էլեկտրոնային հաղորդակցման գործիքների զարգացում, դրանց դերի կարևորում:

Գրեթե բոլոր խոշոր համայնքներում ՔՀԿ-ներ առկա են կամ գործունեություն են ծավալում: Ընդ որում, տեղական իշխանություններից բոլորը մեծապես կարևորում էին նրանց դերը ինչպես համայնքային հասարակական կյանքում, այնպես էլ քննարկումներին ու լսումներին մասնակցելու առումով: Ավելին, ՏԻՄ-երը հիմնականում բարիդրացիական և կառուցողական հարաբերությունների մեջ են գտնվում ՔՀԿ-ների հետ՝ դրանով իսկ պայմանավորելով համատեղ հաջող համագործակցությունը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՔՀԿ-ների կազմը հիմնականում չի փոփոխվում տարվա կտրվածքով:

Գծապատկեր 2. Սոցիալական կապիտալի բաշխվածությունը



Գծապատկերը ցույց է տալիս, որ այս բաժնում հարցերի պատասխանները բաշխվել են հիմնականում երեք ուղղություններով, ինչը իր հերթին պայմանավորում է սոցիալական ոլորտի համաթվի համեմատաբար ցածր լինելը: Օրինակ համայնքների մեծամասնությունը «դրական» են գնահատել երիտասարդների մասնակցություն, համացանցի հասանելիությունը և ակտիվ ՔՀԿ-ների առկայությունը, մինչդեռ «բացասական» արտագաղթը: Երրորդ բևեռը ձևավորվող հանգամանքը, համայնքներում փոքրամասնությունների բացակայությունը: Այս հարցին համայնքներից շատերը պատասխանել են «վերաբերելի չէ»:

Տնտեսական կապիտալ (հիմնական դրական և բացասական գործոնները)

Համաձայն Գործիքակազմի մեթոդաբանության՝ տնտեսական կապիտալի ոլորտի փոփոխականները ուղղված են բացահայտելու համայնքի ներուժը տնտեսական ակտիվության համատեքստում՝ արտացոլելով ինչպես աշխատանքային ռեսուրսների (այդ թվում՝ կանանց մասով առանձին) առկայությունը, այնպես էլ բնակիչների և տնային տնտեսությունների սոցիալական դրությունը և դրանց ազդեցությունը մասնակցության մակարդակի վրա:

Ծրագրին մասնակցող թիրախային համայնքներում տնտեսական կապիտալի ոլորտի ընդհանուր համաթիվը 0,49 է:

Տեղական իշխանությունների գնահատականը մասնակցության գործընթացներում մեկ շնչին ընկնող եկամտի մակարդակի դերի վերաբերյալ միանշանակ չէ: : ՏԻՄ-երի մի մասի կարծիքով՝ միջին եկամտի ցածր մակարդակը վկայում է համայնքում սոցիալական խնդիրների առկայության մասին: Նման խնդիրների պարագայում քաղաքացիական մասնակցությունը ապահովելը խնդրահարույց է դառնում ՏԻՄ-երի համար. բնակիչները հետաքրքրված չեն այնպիսի մասնակցությամբ, որի արդյունքում իրենք անմիջականորեն տնտեսական օգուտ, այսինքն՝ կենսամակարդակի բարձրացում չեն ակնկալում: Սրան հակառակ, ՏԻՄ-երի մի մասը կարծում է՝ մեկ շնչի հաշվով եկամտի ցածր մակարդակը կարող է խթան հանդիսանալ բնակիչների շրջանում առավել ակտիվ մասնակցել համայնքներում որոշումների կայացման գործընթացին, քանի որ բնակիչները ակտիվ մասնակցության մեջ տեսնում են իրենց համայնքի զարգացման գրավական, ինչը անխուսափելիորեն կբերի հենց իրենց կենսամակարդակի բարձրացմանը:

Նմանապես և մեկ շնչին ընկնող եկամտի բարձր մակարդակի դեպքում կարծիքները տարանջատվում են: Ոմանք գտնում են, որ բնակիչների բարեկեցությունը անհետաքրքիր է դարձնում համայնքում հասարակական կյանքին մասնակցությունը, իսկ մյուսները գտնում են, որ հենց կենսամակարդակի բարձր լինելն է երաշխավորում բնակիչների մասնակցությունը, քանի որ վերջիններս առօրյա հաց վաստակելու խնդիր չունեն և կարող են առավել կառուցողական կերպով դերակատարում ունենալ որոշումների կայացման գործընթացներում: Մեկ այլ կարծիքի համաձայն էլ՝ բնակչության կենսամակարդակը ուղղակիորեն կապ չունի համայնքում քաղաքացիական մասնակցության հետ:

Նման պատկեր է նաև գործազրկության հետ կապված: Տեղական իշխանությունների մի մասը գտնում է, որ համայնքում գործազրկության բարձր մակարդակը խոչընդոտ է բնակիչների մասնակցության համար, մյուսները գտնում են, որ հակառակը՝ գործազրկությունը «ստիպում» է բնակիչներին որևէ կերպ ինտեգրվել

համայնքային հասարակական կյանքին, ինչը որոշ դեպքերում կարող է եկամտի աղբյուր հանդիսանալ:

Բազմակարծություն է դիտվում նաև երիտասարդների գործազրկության մակարդակի փոփոխականի գնահատման ժամանակ:

Իգական սեռի աշխատուժի առկայությունը գերակշիռ դեպքերում դիտվում է որտես դրական հանգամանք՝ բնակիչների մասնակցության առումով:

Տնային տնտեսությունների վերաբերյալ գնահատում իրականացնելիս ՏԻՄ-երը հիմնականում միակարծիք են առ այն, որ ծանր սոցիալական պայմանները մարդկանց մտքերը ավելի շատ կենտրոնացնում են առօրյա հոգսերի և հանապազօրյա հաց վաստակելու խնդիրների վրա: Արդյունքում, էապես տուժում է վերջիններիս մասնակցությունը համայնքում որոշումների կայացման գործընթացներին:

Բնակիչների ինքնազբաղության բարձր մակարդակը դիտվում է որպես դրական կողմ մասնակցության գործընթացներում, քանզի ունենալով սեփական զբաղմունքը և եկամտի ձևավորման աղբյուրը՝ բնակիչները կարողանում են նշված համատեքստում վեր հանել իրենց հուզող հարցերը և բովանդակային երկխոսության մեջ մտնել տեղական իշխանությունների հետ:

Գծապատկեր 3. Տնտեսական կապիտալի բաշխվածությունը



Ի տարբերություն սոցիալական կապիտալի, տնտեսական կապիտալի վերաբերյալ հարցերի պատասխանների բաշխվածությունը երկու ուղղությամբ է: «Վերաբերելի չէ» պատասխանների բացակայության պայմաններում այս համաթիվը էլ ավելի փոքր է: Սակայն ի տարբերություն նախորդի այստեղ ավլեի շատ է դիտարկվում բազմակարծություն՝ նույն հարցին տարբեր պատասխաններ են տրվել:

Մարդկային կապիտալ

Համաձայն Գործիքակազմի մեթոդաբանության՝ մարդկային կապիտալի ոլորտի փոփոխականները ուղղված են գնահատելու համայնքում ապրող բնակիչների կրթական մակարդակը, և դրա արդյունքում մարդկանց մոտ ձևավորված կարողությունները, կարողությունների հետագա զարգացման հնարավորությունները:

Ծրագրին մասնակցող թիրախային համայնքներում մարդկային կապիտալի ոլորտի ընդհանուր համաթիվը 0.66 է:

Համայնքային իշխանությունները հիմնականում համակարծիք են այն հարցում, որ համայնքում դպրոցի ավարտական վկայական ստացած բնակչության, այդ թվում՝ կանանց մեծ տեսակարար կշիռը նպաստում է քաղաքացիների կողմից համայնքում որոշումների կայացման գործընթացին մասնակից լինելուն: Տեղական իշխանություններից մի մասի կարծիքով էլ դպրոցի ավարտական վկայական ունենալը որևէ ազդեցություն չունի բնակիչների շրջանում մասնակցային գործընթացներում ներգրավվելու շահագրգռվածության վրա: Ավելին, նրանք ուղղակի կապ չեն տեսնում համայնքի հասարակական կյանքում ակտիվ լինելու և լրիվ դպրոցական կրթություն ստանալու միջև:

Պատկերը փոքր ինչ այլ է վերջին 15 տարվա ընթացքում դպրոցական կրթական ծրագրում քաղաքացիական կրթության առարկաների դասավանդման հարցում: Համայնքների գերակշիռ մասը գտնում է, որ ավագ դասարաններում հասարակագիտական առարկաների դասավանդումը օգնում է աշակերտների մոտ անհրաժեշտ գիտելիքներ ձևավորելուն, վերջիններս ավելի հստակ են պատկերացնում, թե ինչ են տեղական ինքնակառավարումը, համայնքը, տեղական իշխանությունները, բնակիչների դերը համայնքային կյանքում և այլն: Նշվածը, համաձայն ՏԻՄ ներկայացուցիչների, անմիջականորեն ազդում է համայնքի երիտասարդ բնակիչների ներգրավվածության վրա հասարակական կյանքում և որոշումների կայացման գործընթացներում: Որոշ համայնքներ սակայն նշում են, որ քաղաքացիական կրթությունը առանձնապես ազդեցություն չունի մասնակցության մակարդակի բարձրացման գործում: Սակայն փորձագետների առավել հանգամանալից հարցման արդյունքում պարզ է դառնում, որ տվյալ համայնքներում հասարակագիտական առարկաների դասավանդման որակը, բավարար չէ, և սա է պատճառը, որ երիտասարդները համապատասխան գիտելիքներ չեն ստացել քննարկվող ոլորտի վերաբերյալ:

Համայնքի բնակիչների արհեստավարժության նկատմամբ վերաբերմունքը հիմնականում չեզոք է: Տեղական իշխանությունները առանձնապես կապ չեն տեսնում համայնքի բնակիչների՝ որևէ կոնկրետ ուղղությամբ արհեստավարժ լինելու և քաղաքացիական մասնակցությանը հաղորդակից լինելու միջև:

Ինչպես և նշվել էր սոցիալական կապիտալի ոլորտը դիտարկելիս՝ վերջին մի քանի տարիներին համայնքներում ավելացել է թվային տեխնոլոգիաների հմտություններ ունեցող բնակչության թիվը, ուստի այս փոփոխականը

գերազանցապես գնահատվել է որպես դրական՝ ի նպաստ բնակիչների՝ մասնակցային գործընթացներին ներգրավման:

Համայնքների մեծ մասում կամավորական աշխատանքներին մասնակցությունը ավանդույթի է վերածված: Ուստի համայնքերի գերակշիռ մասում բնակիչները մասնակցում են կամավորական աշխատանքներին՝ անկախ այն հանգամանքից, թե ում կողմից են դրանք նախաձեռնվել՝ տեղական իշխանությունների, թե հանրային ոլորտի այլ կազմակերպությունների: Այնուամենայնիվ, կան համայնքներ, ուր բնակիչները դժվարությամբ են ներգրավվում կամավորական աշխատանքներում:

Համայնքների մեծ մասում կյանքի ամբողջ ընթացքում սովորելու հնարավորությունները սահմանափակ են, հետևաբար և դրանց մատչելիության մասին խոսելը անիմաստ է: Սակայն կան համայնքներ, որտեղ ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են տարատեսակ ձևաչափի սեմինարներ և դասընթացներ, որտեղ և համայնքի բնակիչները հնարավորություն են ստանում ձեռք բերել նոր հմտություններ կամ զարգացնել արդեն իսկ ունեցածները: Ընդհանուր առմամբ, ՏԻՄ-երը համակարծիք են, որ կյանքի ամբողջ ընթացքում սովորելու հնարավորությունների առկայությունը որևէ կերպ չի կարող բացասաբար ազդել քաղաքացիական մասնակցության գործընթացներում բնակիչների ներգրավվածության վրա:

Գծապատկեր 4. Մարդկային կապիտալի բաշխվածությունը



Գծապատկերը ցույց է տալիս, որ այս բաժնի հարցերը հիմնականում ստացել են «դրական» պատասխանը, ինչ արդյունքում այս բաժնի համաթիվը համեմատաբար բարձր է: Սակայն ուշադրության արժանի է «ծայրահեղ դրական» պատասխանների սակավությունը և «վերաբերելի չէ» պատասխանների առկայությունը: Այս պարագայում, ըստ Մեթոդաբանության, կարելի է եզրակացնել, որ կարողությունների մակարդակը շատ բարձր է եղել՝ առանց որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների ներգրավվելու պատրաստակամության վրա որևէ տեսանելի ազդեցության, ինչը լիովին համապատասխանում է մեր իրականությանը:

Քաղաքական կապիտալ

Համաձայն Գործիքակազմի մեթոդաբանության՝ քաղաքական կապիտալի ոլորտի փոփոխականներն ուղղված են գնահատելու համայնքում ապրող բնակիչների քաղաքական հետաքրքրությունները, ներգրավվածությունը համայնքում և հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին, ինչպես նաև վերջիններիս արժևորումը առհասարակ:

Ծրագրին մասնակցող թիրախային համայնքներում քաղաքական կապիտալի ոլորտի ընդհանուր համաթիվը 0.67 է:

Ըստ թիրախային համայնքների տեղական իշխանությունների մեծ մասի՝ իրենց համայնքում ՏԻՄ-երի վերջին ընտրություններին բնակիչների մասնակցության մակարդակը որևէ կերպ չի առնչվում նույն այդ համայնքում հասարակական կյանքին քաղաքացիական մասնակցության մակարդակի հետ: Ընտրությունների ժամանակ, ըստ նրանց, ակտիվություն մշտապես զգացվում է, սակայն, օրինակ, համայնքի տարեկան բյուջեի հաշվետվության հանրային քննարկման ժամանակ մասնակցությունը խիստ ցածր է: Ըստ ՏԻՄ-երի որոշ ներկայացուցիչների՝ «փողոցից ենք մարդ բռնում բերում, որ գոնե այդ մի քանի հոգին լսեն»:

Համայնքային իշխանությունները տարակարծիք են այն հարցում, թե ինչպես է ազդում համայնքի բնակիչների ակտիվ ներգրավվածությունը քաղաքական կյանքում որոշումների կայացման գործընթացների վրա: Սակայն նույն այդ իշխանությունները միակարծիք են այն հարցում, որ նման քաղաքական ակտիվությունը բացասական ազդեցություն չունի համայնքի հասարակական կյանքում դերակատարում ունենալու հարցում: Կան համայնքներ, որտեղ բնակիչները մեծապես հետաքրքրված են քաղաքական գործընթացներով և մշտապես մասնակից են դառնում դրանց: Որոշ համայնքների դեպքում էլ քաղաքական հետաքրքրվածությունը խիստ ցածր է:

Թիրախային համայնքներում փոքրամասնությունները հիմնականում ներգրավված չեն քաղաքական կյանքում և որևէ հետաքրքրվածություն չեն ցուցաբերում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ:

Համայնքները միակարծիք են, որ համայնքի ավագանու կազմում կին ավագանու անդամ(ներ)ունենալը միմիայն դրականորեն կազդի տվյալ համայնքում որոշումների կայացման գործընթացների վրա: Այն համայնքներում, որտեղ ավագանու կազմում կա(ն) կին անդամ(ներ), տարբեր օրինակներով հիմնավորում են դրական ազդեցությունը: Սակայն կան համայնքներ, որոնց ավագանու կազմում չունեն կին անդամներ, ուստի այդ համայնքները դժվարանում են հստակ գնահատական տալ ավագանու կազմում կին անդամի գործունեության վերաբերյալ, ինչպես նաև կապել այդ հանգամանքը համայնքի հանրային կյանքում բնակիչների մասնակցության մակարդակի հետ:

Ծրագրին մասնակից համայնքների իշխանությունները տարբեր կերպ են գնահատում իրենց բնակիչների կողմից քաղաքական բանավեճերի/միջոցառումների արժևորումը, սակայն բացասական չեն գնահատում վերջինիս ազդեցությունը համայնքում որոշումների կայացման գործընթացների վրա: Կան համայնքներ, որտեղ բնակիչները ակտիվ մասնակցում են ցանկացած քաղաքական ակցիայի/գործողության: Կան համայնքներ, որտեղ քաղաքական ակցիա իրականացնողները միայնակ են մնում իրենց մի քանի համախոհների հետ:

Անխտիր բոլոր համայնքների տարեկան բյուջեներում որոշակի գումար է նախատեսվում համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին, խոցելի այլ խմբերին աջակցություն ցուցաբերելու նպատակով, ավելին, հնարավորության դեպքում այդ օգնության շահառուների շրջանակը հնարավորինս ընդլայնվում է:

Տեղական իշխանությունների զգալի մասը նշում են, որ համայնքում որոշումների կայացման նախկին մասնակցային գործընթացներում բնակիչների մասնակցության մակարդակը բարձր չի եղել: Իհարկե, կան համայնքներ, որտեղ բնակիչները մշտապես ակտիվ են որոշումների կայացման գործընթացներում: Այնուամենայնիվ, այդ համայնքները տեսակարար մեծ կշիռ չունեն:

Գծապատկեր 5. Քաղաքական կապիտալի բաշխվածությունը



Ըստ գծապատկերի՝ քաղաքական կապիտալի պարագայում հարցերի պատասխանները հիմնականում եղել են «դրական»: Բացառություն է կազմում փոքրամասնություններին վերաբերող հարցը, որի պատասխանները համահունչ են սոցիալական կապիտալի բաժնի պատասխաններն:

ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շահակիրների նույնականացում և գնահատում. շահակիրների բաշխվածությունը՝ ըստ քառորդների

Ինչպես նշել ենք Գործիքակազմը նկարագրելիս՝ համայնքներում քաղաքացիական մասնակցության կարողության գնահատման վերլուծություն հաջորդ փուլը շահակիրների նույնականացումն է և դրանց գնահատումը:

Համաձայն Գործիքակազմի մեթոդաբանության՝ շահակիրները դասակարգվում են հետևյալ խոշոր խմբերի՝

1. Ինստիտուցիոնալ դերակատարներ,
2. Քաղաքացիական հասարակություն,
3. Մասնավոր հատվածի դերակատարներ:

Յուրաքանչյուր խմբում ընդգրկված շահակիրների առավել մանրամասն նկարագրությունը բերված է Գործիքակազմի մեթոդաբանության մեջ:

Ծրագրի իրականացման շրջանակներում համայնքներում հնարավոր շահակիրներին բացահայտելու և նույնականացնելու գործընթացում տեղական իշխանությունները առաջնորդվել են շահակիրների հենց այս դասակարգմամբ:

Շահակիրների գնահատումը թեև նման է համայնքերի գնահատման գործընթացին, այնուամենայնիվ կան որոշ առանցքային տարբերություններ, որոնք հստակ տարբերակում են գնահատման նշված երկու դեպքերը:

Զեկույցի առաջաբանում նշել ենք այն հանգամանքի մասին, որ համայնքները դժվարություններ ունեցան շահակիրների բացահայտման, նրանց նույնականացման և քարտեզագրման ընթացքում: Այդ դժվարությունների պատճառը հիմնականում իրականացվող գործընթացը լիարժեք չպատկերացնելն է: Խնդիրը ավելի է բարդանում այն ժամանակ, երբ համայնքում որևէ կոնկրետ հարց հանրորեն քննարկելու պարագայում հստակ ձևավորված շահագրգիռ կողմերչեն բացահայտվում: Ընդ որում, հիմնական պատճառը ոչ թե համայնքային իշխանությունների անկարողությունն է այդ կողմերին բացահայտելու, այլ այն, որ տվյալ խմբերը իրենք իրենց չեն նույնականացրել՝ որպես առանձին հանրույթ կամ շահագրգիռ կողմ: Ուստի համայնքային իշխանությունները շատ դեպքերում դժվարանում են 1-2-ից ավելի շահակիրների նույնականացնել:

Շահակիրներին գնահատելու գործընթացի կարևոր առանձնահատկություններից մեկը այն է, որ ՏԻՄ-երը պետք է գնահատեն շահակիրի ոչ միայն կարողությունը որևէ կոնկրետ հարցի շուրջ մասնակցելու, այլև նրա պատրաստակամությունը իր կարողությունները գործի դնելու: Սա ոչ միայն թույլ է տալիս համայնքային իշխանություններին ճիշտ կողմնորոշվել դիտարկվող հարցի շուրջ շահակիրների ներգրավման գործում, այլև հնարավորություն է ստեղծում հետագայում ձեռնարկել համապատասխան քայլեր՝ տվյալ շահակիրի մոտ մասնակցային հետաքրքրությունը բարձրացնելու ուղղությամբ: Վերջինս առանցքային նշանակություն ունի տվյալ շահակիրի հետ հետագա համագործակցությունը կառուցողական մթնոլորտում իրականացնելու առումով:

Գծապատկեր 6. Շահակիրների բաշխվածությունը ըստ քառորդների



Գծապատկերը ցույց է տալիս, որ գնահատված շահակիրների գերակշիռ մասը գտնվում են առաջին քառորդում, ինչը վկայում է, որ դրանց զգալի մասը հետաքրքրված և շահագրգռված չէ մասնակցելու տեղական մակարդակում որոշումները կայացմանը: Շատ դեպքերում դա պայմանավորված է տեղական իշխանությունների՝ շահակիրներին նույնականացնելու, նրանց ներգրավվելու ցածր կարողությամբ: Իր ազդեցությունը ունի նաև համայնքներում կայացած ՔՀԿ-ների բացակայությունը, փոքր և միջին բիզնեսի սոցիալական պատասխանատվության գիտակցման ցածր մակարդակը: Հետաքրքրական է նաև, որ շահակիրները գծապատկերի վրա տեղակայված են գրեթե մեկ գծով, ինչը հուշում է, որ տեղական մակարդակում որոշումների կայացմանը մասնակցելու շահարկի հետաքրքրվածության և կարողության մեջ առկա է գծային կորելացիա: Դա նշանակում է, որ ինչքան կարող լինեն շահակիրները, այնքան ակտիվ ներգրավվածություն կունենան, ինչ ապացուցվում է համայնքներում գործող խոշոր տնտեսվարող սուբյեկտների օրինակներով (Լիդիան Արմենիայի, Քաջարանի «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» և այլն)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծության հիման վրա կատարվել են հետևյալ հիմնական եզրակացությունները.

- Քաղաքացիական մասնակցության մակարդակը համայնքներում որոշումների կայացման գործընթացներին ցածր է: Դա հիմնականում պայմանավորված է մասնակցային գործընթացների մշակույթի համեմատաբար նոր ներդրված լինելով, ինչպես նաև սոցիալական ծանր պայմաններում համայնքային հասարակական կյանքի նկատմամբ անտարբերությամբ:
- Համայնքների համատեքստում գրեթե նույն մակարդակի են սոցիալական և տնտեսական կապիտալի ոլորտների գնահատականները, համեմատաբար տարբեր՝ մարդկային և քաղաքական կապիտալինը: Սակայն, ընդհանուր առմամբ, համայնքների գնահատումների միջև մեծ շեղվածություն չկա, տարբերությունները ավելի շատ պայմանավորված են համայնքի մեծությամբ, համայնքում առկա ակտիվ ՔՀԿ-ով կամ խոշոր ձեռնարկությունների գործունեությամբ:
- Սոցիալական կապիտալի վրա մեծ ազդեցություն ունի արտագաղթը, 30-60 տարեկանների արտագնա (համայնքից դուրս) աշխատանքը: Դրական ազդեցություն ունեն երիտասարդները (մինչև 30 տարեկան), համացանցի առկայությունը և ակտիվ ՔՀԿ-ների առկայությունը:
- Տնտեսական կապիտալի վրա բացասական ազդեցություն ունեն գործազրկությունը, սոցիալական խնդիրները, դրական՝ կանանց մասնակցությունը և զբաղվածությունը:
- Մարդկային և քաղաքական ոլորտների փոփոխականների գնահատման արդյունքները հիմնականում դրական են:
- Շահակիրների հիմնական մասը բաշխված են 1-ին քառորդում, ինչը նշանակում է, որ այդ շահակիրները ակտիվորեն ընդգրկված չեն կամ նույնիսկ անտեղյակ են համայնքային խնդիրներին:
- Հարցվածներից շատերը դժվարանում են նույնականացնել շահակիրներին: Դա կարող է պայմանավորված լինել ինչպես համայնքում ակտիվ ՔՀԿ-ների բացակայությամբ, այնպես էլ ՏԻՄ քաղաքացիական մասնակցության բնագավառում փորձի և գիտելիքների պակասով:

Հիմք ընդունելով վերը իրականացված վերլուծությունը և կատարված եզրակացությունները՝ առաջարկվում է.

- Հենվելով Գործիքակազմի տրամաբանության վրա՝ անհրաժեշտ է առավել մանրամասն ներկայացնել հարցաշարում ներառված հարցերը (փոփոխականները) և դրանց հնարավոր մեկնաբանությունները, քանի որ հաճախ պատասխանները բխում են դրանց նկատմամբ առկա բացասական նախապաշարմունքից: Օրինակ՝ շատերը արտագաղթի, գործազրկության, տնտեսական դժվարությունների վերաբերյալ հարցերի պատասխանները պայմանավորում են դրանց հանդեպ իրենց մոտ արդեն իսկ ձևավորված կարծիքով՝ ամենևին չդիտարկելով և քիչ պատկերացնելով, թե, օրինակ, արտագաղթը ինչ դրական ազդեցություն կարող է ունենալ: Հնարավոր տարբերակների բացահայտումը հնարավորություն կտա տեղական իշխանություններին համապատասխան արձագանքներ մշակել առկա իրականությունից ելնելով,
- Գործիքի լրացման աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է մշակել ուղեցույց՝ հստակեցնելով երբ, ովքեր և ինչպես պետք է

լրացնեն այն, քայլերի ինչ հերթականությամբ: Այն պետք է լինի հնարավորինս մատչելի՝ համայնքում մասնակցային գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար,

- Գործիքակազմում արծարծվող խնդիրներից շատերը տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններից դուրս են՝ գործազրկություն, արտագաղթ և այլն, ցանկալի է լրացուցիչ իրազեկման սեմինարներ կազմակերպել այս թեմաների շուրջ, ինչը հնարավորություն կընձեռի ՏԻՄ-երին միջնորդ հանդիսանալ՝ ներկայացնել հասարակություն շահերը՝ խթանելով ՏԻՄ-բնակիչ կապի ամրապնդմանը,
- Համայնքներում շահակիրների նույնականացումը զգալի խնդիր է: Տեղական իշխանությունները դժվարությամբ են կարողանում նշել համայնքում գործող 1-2 շահակիր, ինչը նվազեցնում է գործիքի արդյունավետությունը: ՏԻՄ-երին ուղղորդելու համար անհրաժեշտ է իրականացնել համայնքներում շահակիրների քարտեզագրում: Նման ձևաթուղթ ներկայացվել էր երկօրյա սեմինարի ժամանակ, երբ մասնակիցներին խնդրել էին թվել շահակիրներին: Քարտեզագրումն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է, որոշակի նախնական աշխատանքներ իրականացնել՝ ներկայացնելով շահակիրների լայն շրջանակ:
- Հաշվի առնելով համայնքներում թույլ ձևավորված ՔՀԿ ոլորտը՝ անհրաժեշտ է մշակել ՏԻՄ-երի և ոչ ֆորմալ խմբերի աշխատելու ձևաչափեր: Դրանք կարող են լինել որոշակի կարիքներ/շահեր ներկայացնող խմբեր (ֆերմերներ, երիտասարդներ, ծնողներ, կանանց նախաձեռնող խմբեր և այլն), որոնք հետագայում ավելի ակտիվ դերակատարում կունենան որոշումների կայացման գործընթացներում:
- Համայնքի համաթիվը գնահատելուց, շահակիրներին քարտեզագրելուց և գնահատելուց հետո անհրաժեշտ է մշակել նաև մասնակցության իրականացման և բարելավման ռազմավարությունները: Առաջարկվում է աջակցել համայնքներն մասնակցության իրականացման և բարելավման ռազմավարությունների մշակման գործում, ինչպես նաև համապատասխան ֆինանսական օժանդակություն ապահովել՝ դրանք կյանքի կոչելու համար: Նախնական գնահատումներով՝ յուրաքանչյուր համայնքի համար նշված ֆինանսական օժանդակության գումարը կկազմի 2000-3000 եվրո, որը կուղղվի կազմակերպական աշխատանքների, նյութերի տպագրության, սկզբնական հետազոտությունների իրականացման աշխատանքներին: